

ԲԱՇՆԵԳԻՆ
Ի Պուլկարիո
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "
—
Լատասոման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
—
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
ԱՆԵԽԻԿ
—



ՊԵՏԱՆԲ
Գրութիւնք եւ
չեն տրուիր:
—
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE
—

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Դ. ՏԱՐԻ

— ՓԵՐ. 3 ՇԱՐԱԹ 1901 —

ԹԻԻ 198

ԹՈՂ ԵՐԹԱՅ

Կայ դիակ, որ հասարակութեան աչքին կը զարնուի, միմիայն թաղմանական հանդէսներու ցուրտ արարողութեանցը մէջ, ուր գոյութեան ամենէն վառ երանգը կը ցնդի և ուր ոչինչին տիրապետութիւնը կը շեշտուի իր է՛ն ահաբեկիչ երևութիւն տակ:

Ասոր ետեէն կերթան մեր անգիտակից արցունքները, սահմանուած միմիայն տիեզերական ոչնչութեան ողբին, ուր ամենէն կարևոր բաժինն ունի մեր Եսը: «Լա՛ր, մենք ալ պիտի մեռնինք»: Ահա միակ համակրական հառաչանքը, զոր կըրնայինք ձօնել ատանկ ինքնիրեն անհեաացող միա՝ միտ դէմքերու:

* * *

Եւ սակայն կայ դիակ, որ տիեզերական ատանգը պարապութեանը մէջ բան մը ձգելով կան հետանայ աշխարհէս: Անոր փոշիացած ոսկորներուն ետե կը տեսնենք հսկայ բուրգերը՝ սերունդներու բարօրութեանը համար կերտուած, ուրոց մէջ նոյն ատ ափ մը հողն է, որ իր է՛ն մեծ հեղինակութիւնը գրած, և շուայօրէն մսխած է իր հողին, իր շունչը և իր էութիւնը իր կարող բոլոր կենսատու տարրերը: Անիկա՛ իր առջև, ա՛ծապարած է բանալ մեթրի չափ նեղ փոս մը, հոն աշխարհաչէն մարդու մը առաքինութեանց յիշատակովը գլորուելու համար: Ինք փլած ու քայքայուած է, միմիայն շինելու համար, ու հոգեկան ատ գեղեցիկ բարձրութենէն՝ երբէք գահավիժում, երբէք ստորնացում, երբէք վայրէջ ունեցած չէ և տիգմն ու ցեխը մշտնջենապէս անձանօթ մնացած անոր սուրբ ոտքերուն, մինչեւ վերջին վայրկեանը:

Ասոր համար է ահաւասիկ, որ հասարակութիւնը արցունքի շիթեր ունի իր աչքին մէջ, յուզումներ՝ հիացումի և ամենախոր երախտագիտութեան, որուն համար դժուարահաճ մարդն անդամ պիտի հաճէր մեռնիլ, եթէ հնար ըլլար:

Ասոր համար է, որ ալ ամբողջ մարմնացած բանաստեղծութեան մը բոլոր խառնեմազանճութեանը — սկսած Սովորականի մը «մարդկայ» որ, քար կը ծնի, մարդ կայ որ քնարէն — մինչև վսեմի հասնող հազարաւոր ողբալից փրճապներու արձագանքովը կը լեցնէ՝ միմիայնորը և ատ ամենուն մէջ իր հողին կը գնէ անոր յուզարկաւորութեան սպասին, նոյն իսկ գերեզմանէն անդին ալ:

* * *

Ու կայ դիակ ալ, նոյն իսկ կենդանի դիակ, որ ոտքէն գլուխը կղկղանքներու գարշելի զանգուած մը կը ներկայացնէ և որ մարդկային խուզարկու միտքը միշտ անոր անցեալին վերյուշման տաղտուկին կը մատնէ բռնօրէն:

Հոտ է որ ինկածներու նկատմամբ զգալիք արգահատանքնիս կը փոխուի շատ խորունկ գարշանքի մը և հասարակաց շահը չը թողուր երբէք, որ անկումին հանդէպ քնախաւօրէն պահելիք լուսթիւննիս գերադաս համարինք անոր նեխած հողին մերթ ընդ մերթ որակելու տըխտը՝ բայց, շատ օգտաւէտ հարկէն:

Ի՛նչ... ինկած ըլլալուն համար արգահատիլ, բայց յիշեցէք թէ անիկա իր ծուռ քամակին վրայ մեղքի սոսկալի տապալկներ ունեցաւ — գուցէ քամակը ծուռ է անոր համար որ մեղքերը ընկճած են զայն — ու մեծ Գաղափարի մը անունով սարն ու ձորը, Կուրն ու Վոսթորը, տարիներու երկար շարքի մը մէջ ասպարէզ դարձուց իր խաչագողական արշաւանքին և շատ անգամ արիւնը խառնեց գարնջուրի փրփրներուն...:

Յիշեցէ՛ք թէ անիկա հայրենի երկրէն մինչեւ ինք հասնող աղէթարշ վայնասուններու ցուրտ սարսուռը՝ մարտիրոսութեան միւսնոյն՝ ահաբեկիչ վայրկեաններուն մէջ, տարաւ թոթովեց հեշտանքին տաք գիրկը և նորէն ականջը երկարեց միւսնոյն մեռելական զօղանջները լսելու աներես ցանկութեամբ։

Ինչ որ էր հնճագէն չարլին ձեռքը, նոյնն եղաւ և մեծ գաղափարը ատոր ձեռքը։ Տեղ մը նովէն, տեղ մը լիրբ, իսկ ամեն տեղ թարթիւֆ, ատ հնճագէն պարագային համեմատ գրաւ ամենու տրամադրութեանը ներքև և սկսած կուսակցութիւններու լայն ու դիւրագրաւ ստամոքսէն մինչև վաշխառուին ամենանեղ գիրկը կրթկրթներ ընելով, գարիի հատիկներ փնտռեց՝ իր կաշին քաշքշելու և գուցէ աս կերպով ոգեւարքի կեանքըն ալ ապրելու համար . . . :

Ու յետոյ՝

Յետոյ՝ ուզէ չուզէ, մոռցաւ պիրան, մոռցաւ հեշտանքներու աշխարհը ու միմիայն չոր հացը գտնելու անորակելի նուաստացումով մը գնաց ինկաւ ամենէն աղտոտ տիղմին մէջ, ուրկէ ահաւասիկ կը տեսնուի իր շղաճգական գալարումները բարոյական մահուան ամենէն պըժգալի դալուկին մատնուած։

Յիշեցէ՛ք աս ամենը ու յետոյ ըսէ՛ք.

Թող երթայ։

ԹՕՏԻՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

25 ԱՄԵՐԱՅ ՅՈՒՆԻԱՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Գոհութեամբ կը տեղեկանանք թէ Պէրպէրեան բարեհամբաւ վարժարանի նախկին կարող սաներէն Էսայեան, Գալսէրլեան, Գարաբեան, Գալակէօզեան, Խօրասանճեան, Կարապետեան, Հինտլեան, Կիւրեղեան, Տէմիրճիպաշեան և այլք իրենց սիրեցեալ դաստիարակին Ռէթէոսէֆէնտի Պէրպէրեանի նկատմամբ իրենց երախտագիտութիւնը գործնականապէս արտայայտելու համար պատեհ առիթ մը ձեռք անցուցած են։ Պէրպէրեան Վարժարանի հաստատութեան 25ամեակը կաւարտի յառաջիկայ Հոկտեմբերին. ուստի որոշած են իրթական այս Յոբելեանը տօնել գործնական ձևով մը որ տեւական օգուտ մ'ալ արտադրէ սոյն բարեհամբաւ Հաստատութեան համար։ Ս. Պատրիարքը սանուց այս երախտագիտական զգացումը գնահատած և քաջալերած է սոյն ձեռնարկը։ «Ինչպէս զիտն» կառավարիչ վարժարանին արդի հինցած շէնքը վար առնելով ի հիմանց

նոր մը կառուցանել կամ նոյն շէնքին քով ուրիշ մը կանգնել. քանի որ, բարեբաղդաբար Պէրպէրեան էֆ. Նիւմակուան գետնին ու շէնքին տէրը կրցած է ըլլալ ու դպրոցին դիրքն ալ ընտիր ըլլալով, անկէ լաւագոյն դիրք մը անկարելի պիտի ըլլայ գտնել։

— Կեսարիայի Թալաս գիւղէն կը գրեն թէ տեղացի Հայերէն Ռուսահայատակ Տիար Կարապետ Խուպէսէրեան յանկարծամահ եղեր է յունվար 3ին և հետեւալ օրը յուղարկաւորութիւնը կատարուելով, մարմինը ամփոփուեր է Թալասի Ս. Երորդուլութիւն եկեղեցիի գաւիթը մասնաւոր դամբարանի մը մէջ։

Հոնգուցեալը 3,000 օսմ. ոսկիի կտակ մը ըրած է, որուն տարեկան 120 ոսկիի տոկոսէն 75 ոսկին յատկացուցած է Թալասի եկեղեցւորին և իր կառուցած Խուպէսէրեան վարժարանին, 18 ոսկի Կ. Պոլսի Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին, 15 ոսկի Իզմիրեանց գրական մրցանակին և 12 ոսկի Երուսաղէմի Ս. Յակոբեան վանքին, Կտակը վաւերացուած է արդէն մեր Պատրիարքարանէն և ուսական հիւպատոսարանէն։ Կտակաւատար նշանակուած են Կ. Պոլսայ Ս. Պատրիարքը, Տիարք Պատրիկ և Գաւիթի Կիւլպէնկեան, Յարութիւն Կիւրեղեան, միտսի. Նալար Խուպէսէրեան (հանգուցեալի եղբայրը), Սինեքերիմ Խուպէսէրեան, Աւագերէց Տէվէլեան Տէր Հայրը և Տիար Վահան Հապարապետեան։

Վերոյիշեալ կտակէն զատ, հանգուցեալը 350 ոսկի ալ կտակած է եկեղեցիներու, վանքերու եւ աղքատութեամբներու։

ՏԻԱՐ ԹԱԳԻՈՐ ՓԱՓԱՋԵԱՆ

Նախկին Տնօրէն—գասաւոր տեղւոյս Աղգային երկսեռ վարժարանաց, Տնօրէն պատասխանատու Իրաւունք Հայ. Գաղ. լրագրոյ 1885, Նախկին Տնօրէն—գասաւոր Ռումանիոյ Ռուման քաղաքի Ազգ. երկսեռ վարժարանաց

Հանգեաւ ի Տէր երէկ 2 փետրվար, ի հասակի 65 ամաց։ Յուղարկաւորութեան տխուր հանգէսը տեղի պիտի ունենայ այսօր ժամը 3ին, կէս օրէն վերջ տեղւոյս Ս. Պարգիս եկեղեցւոյն մէջ։

ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՀՈԳԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ Վառնա 3 Փետրվար 1901

(Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք հանգուցեալ վաստակաւոր գասաւորին սգակիր ընտանեացը)։

Այս անգամ ալ երեսունմէկ ազգայնոց ստորագրութեամբ զրկուած է մեզ հետեւալը, հրատարակելու խնդրանքով .

Պ. Ղ. Նահապետեան

Մեր բաց նամակին պատասխանը կարգացինք «Խրատունք» թիւ 8 թերթին մէջ :

Հակառակ՝ Ձեր առաջին «Դարամտիկ» աստարիի մէջ (է?) ի՞նչ կը մտածեն մեր գործիչները՝ յօդուածը երկրորդ անգամ կարգալու մասին Ձեր անհարկի յանձնարարութեան, Ձեր այս վերջինով մեզի տուիք աւելի մեծ իրաւունք և պահանջելու, որ հաճիք պատասխանել առանց փախուստի :

«Պատասխանը — կըսէք ի մէջ այլոց — դացէք փնտռեցէ՛ք անկաշառ հրապարակագիրներէ, մաքուր յեղափոխականներէ և այլն» :

Արդ Ձեր խօսքով .

Դուք որ Ձեր որոշ ստորագրութիւնով հրապարակագրի մը բոլոր գրական պարտականութիւնը կը կատարէք ձիգ տարիներէ ի վեր այլ և այլ թերթերու մէջ, և չենք ալ կարծեր, որ անմաքուր դեր ունեցած ըլլաք ու է գաղափարական գործունէութեան մէջ, Ձեր խօսքով կըսենք, Դուք ինքնին որոշած կըլլաք ԱՆՁԸ, որ պարտական ըլլայ մեզի պատասխանելու ՏՐԱՄԱՐԱՆՈՐԷՆ՝ Ուստի կ'սպասենք :

ԵԶԱԿԱՆ ՊԱՐԱՄՐԱՀ ՄԸ

Փ. Պօլիս

«Հայելիի Կոյնակն ալ Իրաւունքի Կայծին պէս յանկարծ անհետացաւ հրապարակէն . չըլլայ որ այն ալ մէկ թուրով մարող հերոս մը գտնուի . ապրիլն մեր հետները» : Այս խօսքերը կը լսուէր անցեալներս թրքախօս վաթսուներեց օրիորդի մը բերնէն, բնատնկան գուռ մարման մը մէջ, երբ «Հայելիի Կոյնակը իր բանի մը ամսուան ճարտարութենէն վերագործած, կը պատրաստուէր իր արձագանքները տալ Հայելիի սիւնակներուն մէջ : Այնքան հասիկ պատահանց ցուրտ ու ձմեռ բոլորող այդ օրիորդին համար Կոյնակ իր ըսելիքները ուրիշ ժամանակի պահելով, այժմ պիտի առաջնորդէ ընթերցողը պարասրահի սեմէն ներս, ուր հաճելի ժամեր պիտի անցունէ, բայց թող ներսի իրեն եթէ տեղ տեղ տղեղ ու անասորձ նկարներու առաջ կանգ առնուի :

Հիսար—գարուի գեղեցիկ շէնքերէն մէկուն մէջ անցեալ երեքշաբթի գիշեր տեղի ունեցաւ պարահանգէս մը ի նպատակ անհատական բակի մը, թէ և կանաչ—կարմիր ափիշներ չը կային փակած փողոցներու բերանները, բայց բաւականէն աւելի շատ բազմութիւն մը լեցուցած էր պարասրահը . հայ տիկիններ ու օրիորդներ զատ, յոյն, պուլի. թուրք, հրեայ և այլ օտարազգիներ ալ կը գրտնուէին : Է՛հ, պիտի մոռնայի, մի՛ խնդաք վրաս, ըսել

թէ օրօրոցի մանուկներ ալ կային, որոց ծնողքը յառաջդիմականներու թայֆային պատկանելուն համար կանուխէն կուգէին վարժեցնել իրենց մանկիկները եւրոպական այսօրինակ վարք ու սարքին : Աերջապէս ժամը Ծին միւղիքը սկսաւ զարնել ու պարն ալ սկսաւ : Բալիքարեան կամ Էրկէնը իր բոմբիւմանը հայ օրիորդին ըրաւ, Հըրեան իր թեւը հայ ազգական տուաւ, Թուրք Էֆէնտին իր գետնէն—թէմէնահն ընելով հայ տիկինին, շրջանը սկսաւ : Կէս ժամ վերջը զադարի տտեն ըլլալով իւրաքանչիւրը իր անկաժեղով պիւլիէն խուժեց : Ընդհանուր խօսակցութիւն մը սկսաւ ոգևորուած նուրբ սրախօսութիւններով : Թիւն մը սկսաւ ոգևորուած նուրբ սրախօսութիւններով : Զարմանքով կը դիտէի թէ՛ հայ իգական սեռը իր տոհմային նկարագրէն գրեթէ հեռացած իր տեսակին մէջ նոր կողմնացոյց մ'էր, որու սրբները մէյ մը արեւելք ու շատ անգամ արեւմուտք կը դառնային . շատ անասորձ կը հնչէր ակնշիւս եւրոպական «մերսի»-ին հետ արեւելքի «նոք» իշէմէմ, բանըմ սանձըլտեօրդը հայ իգական սեռին : Քանի մը ժամ վերջը պիւլիէն մէկ ուրիշ անկիւնը ուշտ գրաւեց տարբեր տեսարան մը, երբ օրիորդին մէկը, հաւաքօսին մօտ էր, բարձր քիչ մը էփել խնկարկած ըլլալուն, գաղտագողի կը թափէր պիւրաները տախտակներէն վար, չեմ գիտեր ինչո՞ւ, գուցէ չը վնասելու համար պարահանգէսի տիրոջ քսակին, տափակութիւններ, որոնք բաժէ—չանթաններու մէջ կը տեսնուին :

Այս տխուր տպագրութիւնով համակուած երբ կը պատրաստուէի մեկնել աշբերէս չը վրիպեցան յեղափոխականի պոնծալի անունը կրող թրքատեսաց հերոսի մը տիկինը որ թիւրք Էֆէնտինի մը թեւը մտած, իրենց շուրջը գտնուողները յիմար ու կարճատես կարծելով իրենց տիկիններուն թարգմանութիւնները կընէին իրարու, ի՞նչ փոյթ ուրիշը, հաճոյալի գիշեր պէտք է իրենց :

Իսկ ես ընթերցող, այս տափակութիւնները արձանագրելովս չը կարծուի թէ գիտաւորութիւնս պարսաւել կամ վիրաւորել է պարող իգական հայ սեռին դիւրազգացութիւնը կամ հնամուլ գաղտփարնորու պաշտպան ըլլալ, ո՛չ, բայց միւսնոյն ժամանակ չեմ կրնար ձեզ խաբել մետալին փայլուն ու շքադիր կողմը ցոյց տալով միայն, երբ անոր հակառակ կողմը իր թերութիւններով կը փայլի : Ընդարձակենք մեր ընկերական ու ընտանեկան համախմբումները ու անոնց շրջանակը, այո՛, բայց ուղղենք մեր քայլերն ալ, յարմարեցնելով մենք մեզի այդ կենցաղին պահանջուած նրբութիւններուն, առանցքի հաւասար եղբերուն վրայ բռնուելով ու ոչ թէ տափակ ինքնատպութիւններու մէջ ընկղմիլ ու ոչ ալ պաղարիւնութիւնը ձեռքէ թողլով բոմբիւմաններու հոսանքէն տարուիլ՝ նազելի գառնալով ուրիշներու : Եկոմայ թերութիւններ որոնք ձաղկելով պիտի սղգոյնին :

Այս քանի մը տողերը մեր պարող իգական սեռին ուղղելէ վերջ, երկու խօսք ալ նմանօրինակ երեկոյթներ կամ ցերեկոյթներ սարքող պարոններու ուղղենք :

(Շար .)

ԿՈՉՆԱԿ

ԲԱՐԻՋԵԱՆ ԼՈՒՐԵՐ



Բարիզի մէջ կը խմուի տարին՝

Պարզ գինի	5, 610, 955	Հարիւրերգալիտր .
Աւքօռ . .	485, 944	" " "
Գարեջուր . .	480, 323	" " "
Խնձորօղի եւ		
Տանձօղի	247, 630	" " "

Այս հաշիւէն դուրս է ազնիւ ըմպելիները, ընտիր գինիները, քացախը, ձիթախղը և այլ հոսանիւթերը: Ուրեմն Բարիզ տարեկան 7 միլիոն հեկտոլիտր ըմպելի կը սպառէ. ու եթէ աման մը շինել հարկ ըլլար այսչափ հոսանիւթը պարունակելու համար, 7000 խորանրագ մէթր տարածութիւն ունեցող տակառ մը պէտք էր:

— Բարիզի մէջ 21.000 մեծ ու պզտիկ խանութներ կան ոգելից ըմպելիք ծախող, 18 հազար նպարավաճառներ կան որոց է՛ն յետինը ունի 10 հազար ֆրանքի գումարազուխ. իսկ 20 հազար փուռեր կան, որոնք բացի Քանթէզի եւ այլ տեսակ հացերէ, մէկ միլիոն 700 հազար ֆր. Գաղ. Անգլ. և Վիէննական հացեր կը պատրաստեն:

— Բարիզի մէջ կան 5000 փոքրաքանակ ծախող ածխավաճառի խանութներ, որոնք միւսնոյն ժամանակ ոգելից ըմպելիներ ալ կը ծախեն: Բարիզի Ժողովուրդը բացի փայտէ և ուրիշ տեսակ վառելանիւթերէ, տարին 3 Միլիոն պարկ փայտածուխ կը վառէ, իւրաքանչիւրը 50 քիլոյէն. իսկ մէկ ու կէս Միլիոն պարկ հանքածուխ, պարկը 25 քիլոյէն:

Այս տարի ոչ միայն գինիները կրկնապատկուած են հանքածուխին, այլ չբուսելու վախը կը տրիէ հոն:

ԱՄԻՍՆԵՐՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ

Յոռուար. — Այս ամիսուն մէջ ծնող գինուորականը շատ բազմաթիւ կ'ըլլայ. որովհետեւ ինքզինքը պաշտպանելու և դժուարութիւններ յաղթելու կարող կ'ըլլայ:

Ֆետրուար. — Անհաւատարիմ կ'ըլլան, արուեստի մէջ անյաշնոյակութիւն կ'ունենան ու կատարելապէս անպարկեշտ կ'ըլլան:

Մարտ. — Ժրաշան, յաջողակ, երջանիկ ամուսնութիւն և բազմաւոր:

Ապրիլ. — Զղային, քաջասիրտ, յանդուգն, իր շանքերը պարապը չեն ելլեր:

Մայիս. — Շողոքորդ, հաճոյակատար և սըտախօս:

Յունիս. — Խաղաղասէր. հաշտարար, առանց մտածելու վճիռ արձակող:

Յուլիս. — Քաջ, վեհանձն. գրգռեալ երեակայութիւն, հրամայող:

Օգոստոս. — Հարստութիւն, երջանկութիւն, փայլուն երիտասարդութիւն բայց ծերութեան մէջ տխուր:

Սեպտեմբեր. — Վախկոտ, վերջէն եկող հարստութիւն, գրգռուած կեանք. չարչարուած ամուսնութիւն:

Հոկտեմբեր. — Աշխոյժ, խաղաղասէր. միշակ հարստութեան տէր (էսնաֆ):

Նոյեմբեր. — Ինքնավստահութիւն, գիտակցօրէն յաշնոյութիւն, սիրահար, բարձր աստիճան:

Դեկտեմբեր. — Տխուր կամ ապոտալք նկարագիր. ամուրի, յաշնոյութիւն մէջ թեթեւօղ: Թարգլ. ԱՍՏՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԿՆԻԿ ԾԵԾՈՂԸ

Մարդար էֆէնտի տարիէ մը ի վեր ամուսնացած էր, ազնուական ճանչցուած ընտանիքէ օրիորդի մը հետ:

Իրիկուն մը՝ բոտ սովորութեան ժամը կէսին շուկայէն կը վերադառնար իր տունը:

Դեկտեմբերի մէջ էր. չոր ցուրտ մը, ցրտաշունչ հով մը կը փչէր. փողոցի անցորդները ըշտապաւ կը քալէին:

Մարդար էֆ. մէկը չդատաւ տանը մէջ: Քիչ մը կանգ առնելէ ետքը խոհանոցը իջաւ, լուցկի մը գտնելով ճրագը վառեց: Յուրտն ու տիրող լռութիւնը դառն կը ներգործէին իրեն, ուստի որոշեց սրահին վառարանը վառել:

Ժամը զարկաւ մէկ. քիչ մը վերջը մէկ ու կէս ու տիկինը դեռ երեւան ելած չէր: Մարդար էֆ. պատուհանին մօտեցած՝ փողոցը կը դիտէր աղէկէզ. անցորդներուն մէջ իր կինը տեսնել կերպէր:

Ժամը չրկու զարկաւ, և ահա տիկինը բացաւ բանալիով տանը դուռը, դիմեց ուղղակի

ԾԻԾԱՂ

ննջարանը ու նետեց անկողնոյն վրայ իր գլուխը և ձեռքի ծրարը. յետոյ սրահին դուռը բացաւ ու խոփուադէմ գնաց հայելիին առջեւ կեցաւ և անոր մէջ ինքզինքը դիտել սկսաւ:

Մարգար էֆ. անկիւն մը թիկնաթռռի մը վրայ նստած ձեռքը լրագիր մը, կարդալ կը ձեւացնէր, վերջապէս գլուխը վեր վերցուց ու ըսաւ.

—Ո՛ւր մնացիր այսչափ ուշ. վերգիրն.

—Ինչո՞ւ կը հարցնես. քիչ մը գործ ունէի.

—Չհասկնամ ուրեմն ուր գացած ըլլալդ.

—Ա՛ման, դո՛ւ ալ. գլուխս մի ուռեցնէր.

քեզի հաշիւ տալու համար չամուսնացայ:

—Շատ աղէկ, բայց ամեն դուրս ելնելուդ, միշտ այսպէս ո՞ւշ պիտի մնաս.

—Քէֆիկս գիտէ.

—Երբ դու այս ճամբան բռնես, ծայրը ո՛ւր կերթայ.

—Ես քեզի բսի եմ. գործիս ասանկ կուգայ. ուզած ատենս դուրս պիտի ելնեմ. ուզած ատենս ալ պիտի վերադառնամ.

Մարգար էֆ. գոռարաւ կրցաւ իր բարկութեանը յաղթել. ու աչքէն ինկած կաթիլ մը արցունքը սրբելէ ետքը, ըսաւ.

—Կարճ կապենք. եկուր երթանք, քիչ մը բան ուտենք, ժամը երեք պիտի զարնէ:

—Ձէ՛ չէ՛. դուն գնա կեր, (և գլխուն մազերը սկսաւ շոկել հայելիին մէջ)

—Եկու՛ր քիչ մը կերակուր ուտենք կըսեմ.

—Իշթէ դուն ասանկ ես. կի՛նդ դողի սարսափի մէջ ձգելէ վերջը, անուշ տեղը կապել կուզես: Չպիտի գամ, ի՞նչ պիտի ընես:

—Վե՛րգիրն, սա խօսքը վերջացուր. եկու՛ր երթանք քիչ մը բան ուտենք. այսօր շատ հոգնեցայ.

—Ա՛ա ըսին ամա՛, «աս մարդը առնելու մարդ չէ. գէշ է, կնիկը չարչարող է» բայց ես մտիկ չըրի.

—Ճանճմ վազ եկուր. ի սէր Աստուծոյ սա խօսքը գոցէ. երթանք քիչ մը բան ուտենք:

—Չպիտի գամ ըսի ա՛. ա՛խ, ես ինչու մըտիկ չըրի. ու այս գէշ մարդը...

Տիկինը խօսքը չկրցաւ վերջացնել, վասն զի Մարգար էֆ. ալ ինքզինքը չկրնալով բռնել սեղանին վրայ գտնուած շուրով լեցուն գուլթի առնելով, շուրը կնկանը քրտին նետեց:

«Տիկինը այս բանէն խելակորոյս, ամա՛ն ամա՛ն, զիս կը ծեծէ կոր. հոգի ազատող չկայ մի» պոռալով փողոցի դուռնէն դուրս կը նետուի. և ալ չի վերադառնար:

Մարգար էֆ. ի անունը հիմա կնիկը ծեծող ելած է:

Քանսիս

Մ. Ա.

Իրարու բոլորովին անծանօթ երկու պարոններ ու տիկին մը կը գտնուէին վաղօ՛նի մը մէջ: Երբ թիւնէլի մը մէջէն կանցնէին, ու երբ վաղօնը կատարեալ խաւարի մէջ մնացած էր, պարոններէ մին ուր տիկինը քովը նստած էր և որ դիմացի պարոնին ծուռ ակնարկներէն նեղացած կերէէր, իր ձախ ձեռքին վրայ համբոյր մը դրոշմելէ ետքը ալ ձեռքովը զօրաւոր ապտակ մը տուաւ դիմացի պարոնին. այս վերջինը համբոյրին ձայնէն խելագար և ապտակէն սարսափահար բարձրաձայն կը պոռայ:

—Տիկին, ես չէի, ա՛ն էր:

Կուզէ՞ք կնոջ մը տարիքը դիտնալ, նախ իր ամենամտերիմ բարեկամուհւոյն հարցուցէք, ու յետոյ իրեն. միշինը ճիշդ իր տարիքը պիտի ըլլայ:

Կրնաք փորձել:

Երկու դասարկապոռներ

—Ա՛խ պարոն Նազար, շատ դժբաղդ վիճակի մէջ եմ, բոլոր ունեցածս ծախեցի:

—Ունեցածդ ծախեցիր մի՛... վերջնական բան մը չը պահեցի՞ր:

—Ա՛հ, իրաւունք ունիս... արտո՞ժակս պահեցի:

Վարժապետն ու աշակերտը

Պ. Գէորգ, եղջիւր ի՞նչ ըսել է.

—Խանսի՛ ըսել է.

—Ինչէ՞ն հասկցար.

—Իշտէ եղջուրէն պէլի է քի խանտիլ ըսել է:

—Լաւ, ըսենք թէ եղջիւր բառին մէջէն խանտիլ հանեցիր, ասոր ֆիթիլը ո՞ւր է:

—Պէսպէլի մուկը տարեր է:

Գինեմոլ մը իւր կնոջը.

—Աս ի՞նչ է. անկողինները ձգեր ես.

—Ի՞նչ ընեմ. վախթը շատ անցաւ նէ՛ զահէր մինակ պառկելու պիտի գայ ըսի:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ (ԱժԱՆԱ ԲՈԺՈՇԻԿ և ԸՆԿ.)

Մարիճա գետ

Բարեշնորհ Տ. Փօնեաք պապան 3 ամիս բանտարկութեան իրան մը կերաւ, ծանօթ դատի մը մէջ կառավարական հրահանին չհպատակելուն համար:

Տոպրիչ

Մեր Տէրպապան՝ հակառակ իրեն եղած կըրկնակի զեկոյցներու, քանի մը ֆրանք ձեռքէ չի փախցնելու համար մեր Սուրբ եկեղեցւոյ ծէսերըն ու արարողութիւնները ծաղրող բողոքական մը պսակեց լուսարորչական աղջկան մը հետ, որ յետոյ դնաց ժողովարան և իր պատուելին ձեռքովն ալ խաթմէրի պսակ մը եղաւ:

Բոժ. — Մի՛ զարմանաք, մեր գիտցած ատ Տէրպապան մամոնայի սիրոյն՝ հրեայի հետ անգամ հայ աղջիկ պսակելու պատրաստ է:

Մալակա

Մեր թուաբանութեան դասատուն՝ ամուսինի մը կողմէ պատուասիրուեցաւ շերմագին. . . ապտակով մը, որ յիշեցուց իրեն թէ «որ ոչ լուիցէ ունկամը՝ անպատճառ լուիցէ թիկամը»:

Քամչաթքա

Եղական վարժարանի մը տնօրէնը իր ուսուցիչներուն ամսականները սկսաւ վճարել . . . մէյ մէկ չիչէ Շումլա պիրասիով:

Փ. Պոլիս

Տեղւոյս եկեղեցւոյն ծննդոց յատուկ արձանագրութեան տետրակը կեղծարարի մը ձեռքով քերթուած ըլլալուն պատճառաւ Պատրիարքարանի և Թաղ. խորհուրդոյն միջև բանակցութեան մեծ դուռ մը բացուեցաւ:

Տէրպապանիս մտմտութէ պաշարուած է:

Պուրբէշ

Մէկ երկու գաղնեհերի խանութպաններու պատրաստած վիճակագրութեան մը նայելով, քաղաքիս մէջ ալիւրէ աւելի բուտրա կը սպառուի եղեր:

Քամչաթքա

Մէկ քանի օրիորդներ խառնաւ սեօնպէթիի մը մէջ որոշեցին իրարու համար . . . իրաւունք ունենալ ընել:

Խալվուզ Աճայիպ խաթունը նկատելով որ օրիորդներուն այս ձեռնարկը իր առուաւորին պիտի վնասէ, որոշեց անոնց դէմ բողոքել . . . փորը մեծ մուխթարին:

Թատրոն Ս անթրալ

Անցեալ իրիկուն օրահի հանդիտականաց մէջ մէկ քանիներուն կողմէ կատարուած ճան ճիշտ

գողութիւնը սարմախական ճշմարիտ սիրահարութիւնները՝ դերասաններուն կատարած արհեստական սիրահարութիւններուն վրայ իշխեցին քամեցին:

Եթէ ժողովրդաւ մը այդ կողմին լուսանկարը առնելով ծախու հաներ, բաւական դրամ կընար շահիլ:

Քամչի պոյու

Երկու տիկիններ իրենց մեղքերէն մաքրուելու և արքունի համար յատուկ պատարագ մը ընել տուին . . . քիսոյով, այսինքն օրթագլանա:

Մալակա

Կիրակի դիշեր պսակուող հարս մը՝ երկու շաբթի առտու կանուխ՝ «ես կնքահար աղայիս տունը պիտի երթամ ըսելով» կծիկը դրաւ:

ԹԱՏՐՈՆ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ի ՌՈՒՍՃՈՒԳ

1901 Փետր. 8 Հինգշաբթի գիշեր ժամ 9

«ՎԱՌԻԵԹԷ» ԽՄԲԻՆ ԿՈՂՄԷ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՐՈՒՍՃՈՒԳԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ

Ա. ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼԱՊ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Ողբերգութիւն 5 արարեւած, Հայերէն լեզուաւ

Անձինք

Վարդան Նախարար Հայոց	Պ. Լ. Շաքարեան
Մագնոս. իւր որդին	Ս. Գալբադեան
Վարդանուշ կին Վարդանայ	Տկն. Պ. Շաքարեան
Գարեգին. Նախարար Հայոց	Պ. Յ.
Խորէն	Պ. Գ. Փեղանեան
Յովսեփ Եպիսկոպոս	Պ. Լ. Էքսերճեան
Յակոբ Բ. Պարսկց Շահ	Պ. Առաքելեան
Մուշկան Նիսալաւուրտ	Պ. Գ. Տիւմանեան
Միհրնէրոս	Պ. Յ. Քէօլեան
Վասակ. իշխան Սիւնեաց	Պ. Ս. Օլաճեան
Ծելուհի Զինուոր մը	Պ. Լ. Էքսերճեան
Հրեշտակն Հայոց	Տկն. Պ. Շաքարեան

ՁԱԿԵՏ ԵՐԿՈՒ ԱՐԱՐ ԹՈՒՐԲԵՐԷՆ ԼԵԶՈՒԱԻ

(Ներկայացումէն ետքը)

ԴԻՄԱԿԱՒՈՐ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (5)

ՌԷՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՆԸ)



Դ.

Տանջարան

Քանդոնի բանտը — քառակուսի մեծ շէնք, ցած եւ միմիկ, թաթարեան քաղաքին գրան մօտ և երկրորդ պարսպին կրթնած — բանտարկութեան ամենէն սոսկալի տեղերէն մէկն էր :

Դուրսի հետ յարաբերութեան միջոց բնաւ չուներ, բայց ի կարմիր ծանր դուռէն ուսկից կը մտնուէր հոն :

Այդ դրան աջ ու ձախ կողմը՝ տասնհինգ ոտքի չափ երկայնութեամբ, պատէն դուրս կ'ելլային երկու մէթր երկայնութեամբ մեծ մոյթեր, որք կախաղանի սիւներու կը նմանէին :

Անոնցմէ իւրաքանչիւրին ծայրը կը տատանէին պամպուէ վանդակներ որք կը պարունակէին մահապարտներու գլուխներ, ոմանք արդէն չորցած, ուրիշներ նոր կտրուած, որոց արիւնը գետին կը կաթկթէր, մինչ իրենց ծամածուռ բերանները հանրային գուլթը կը հայցէին կարծես :

Այդ ահաբեկի մնացորդներէն մէկ բանին, իրենց վանդակին ժանգոտ ձողերէն անցնելով, կախուած կը մնային իրենց մազերուն երկար պոչերէն միայն, և պարսպին մէջ առկախ, կը դառնային ըստ հաճոյս հովին :

Ընդհակառակն, ուրիշ մէկ բանին գետին ինկած էին, որ հապշտապ և լիրբ անցորդներ ոտքով պատին մօտ հրած էին :

Մարդկային ճշմարիտ մտակոյտ մըն էր :

Բանտն այս ալանդակ զարդերը կը պարտէր այն ջարդին որ քիչ առաջ կատարուած էր ճերմակ-չուռու-Փարներ անուն գողերու և մարդասպաններու ընկերակցութեան մէջ, որ այնու մանաւանդ ահարկու էր վասն զի ապստամբներուն հետ միացած էր, և զոր այլադաւանները կը պաշտպանէին սա պատրուակով թէ կրօնական ազանդ մըն էր ան :

Սոլ-Պրոտէ, կիսամեռ և ոստիկանութեան գահաւորակին մէջ փակուած, զրկուած էր այդ սրտաճմիրկ

տեսարանէն, բայց բանտին ներքնակողմին տեսարանն ալ իր սոսկումներն հանգար տեղեւիւ հանդուսնը չուներ :

Մինչ բանտապետը գացած էր տեղեկութիւն տալու տնօրէնին, խեղճ աղջիկը փոխադրուած էր փոքր խանաւ խուց մը ուր ինկած էր փայտէ նստարանի մը վրայ :

Հոն, գուցէ տակաւին կը կարծէր որ սոսկալի մղձաւանջի մը խաղալիկն է, եթէ ցաւագին հեծիւններն ու աղաղակներն որք անմիջապէս իր ականջին զարկին, շուտով իրականութեան բերած չըլլային զինքը :

Գերմարդկային ճիգ մը ընելով այն ատին, ուղեց տեսնել այդ հեծիւններն արձկողէնը և մօտեցաւ վանդակապատ նեղ պատուհանին որ կը լուսաւորէր իր գտնուած սրահն, բայց հազիւ ականարկ մը նետած էր դուրս՝ անմիջապէս ետ ընկրկեցաւ, երեսը ձեռքերուն մէջ ծածկելով : Այդ պատուհան կը նայէր ներքին բակի մը վրայ ուր դատապարտեալները կը կրէին իրենց արժանի պատիժները :

Հոն, ցիւխն և արեւին մէջ կծկուած հարկերի չափ թշուառներ կային արիւնաշագախ ու վտիտ անդամներով, կապարագոյն և հողագոյն դէմքով, և հազիւ ծածկուած քանի մը կտոր հագուստի բրդուծնելով :

Պմանք շղթայով մը մէկ սրունգէն կապուած էին անանկ ծանր զանգուածի մը որ անհնար էր տեղէն երեքնել զայն : Երբ ուղէին քիչ մը մարզանք ընել, պարտաւոր էին գազաններու պէս դառնալ, քանի մը քայլի սահմանին մէջ :

Ուրիշներ, դատաւանին կապուած փայտի մը ծայրին, զոր կը կրէին իրենց վիզը : Հէին կրնար ոչ ծռիլ, ոչ ձեռուրն վեր առնել, և այս զրկում ճշմարիտ տանջանք մըն էր :

Դատապարտեալներէն մէկուն աջ ձեռքն ու ոտքը փակուած էին երեսուն սանդիմէթր բարձրութեամբ տախտակի մը մէջ, և այդ կերպով օրը տասն անգամ բանտին շուրջը պիտի դառնար :

Պահակ մը, կամ լաւ ևս դահիճ մը, անոր մէջքին անցուած շղթայով մը առաջ կը քաշէր զայն, մինչ ուրիշ մըն ալ ծանր դաւաղանով մը կը զարնէր՝ առաջ քշելու համար :

Հետեւապէս այս յանցաւորը ստիպուած էր քաշկռտուիլ իր ազատ սրունքին վրայ, և մարմինը ծռել, ամենէն ցաւաւանջ դիրքին մէջ : Յետոյ, հոս հոն, տղամաթաթալ գետնին վրայ կը տեսնուէր, հրէշային սարգի մը պէս սողալով, բանաւորկեալ մը ծանր վանդակով մը բեռնաւորութեամբ, որուն յատակէն կանցնէին իր

ձեռքերն ու իր գլուխը, բայց անանկ նեղ ծակերէ որ չէր կրնար ետ քաշել զանոնք:

Երբ հանգչիլ ուղեր, ստիպուած էր կծկտիլ այնպէս մը որ իր ծանր բեռն հողին դպչէր: Երբ փափագէր քիչ մը շարժիլ տեղէն, այդ բոլոր ծանրութիւնն իր ուսին վրայ կրելու պարտաւոր էր:

Օրն երկու անգամ, կիներն անոնց որ այս ահռելի տանջանքները կը կրէին, արտօնուած էին գալ ու տեղիք տալ իրենց երիկներուն, իրենք իրենց ձեռքովը կերցնելով ուտելիքը:

Անոնք որ ամուսնացած չէին կամ զորս, աւա՛ղ, ոչ ոք, ոչ ծնողք ոչ բարեկամ չէր խնամեր, բանտապաններուն կողմէ կը սնուցուէին, և շատ անգամ կը պատահէր որ առտուն, անկիւն մը մոռցուած վանդակ մը անշարժութենէ դուրս հանել ուզելով, բանտապահը դիակ մը միայն կը գտնէր այլ ևս:

Այդ զգուելի տեսարանէն զերծ մնալու համար Սոլ—Պրոտէ քաշուած էր խորն այն խուցին ուր փակած էին զինքը:

Պատին մէկ անկիւնը կծկտուած, կը ջանար գոցել ականջները՝ այդ դժբախտներուն ցաւագին ոռնումներէն և այն առտն իր անձնական դժբախտութեան վրայ կը խորհէր, երբ իր սեննչին դուռը մէկէնիմէկ բացուելով՝ իրեն ընկերակցող ուտիկանը ներս մտաւ:

Ա՛ռաջնորդէր բանտին տնօրէնին եւ ուրիշ երկու այցելուներու, ո՛րոց վրայ վերցուց Լէնկի այրին իր սեւեւաբիր ափսարկները:

Տնօրէնը յիսուն տարեկանի մօտ մարդ մըն էր, խիստ դէմքով, և իրեն ընկերացողներէն մէկը ոչ իր կերպարանքին ոչ իր հագուստներուն մէջ չունէր աչքի զարնող բան մը:

Սակայն պաշտօնատարը մեծ յարգանքով կը վարուէր հետը, եւ երկուքն ալ վարմացկոտ ափսարկ մը նետելէ ետքը բանտարկելուհիին վրայ, բանի մը խոսք փոխանակեցին անմիջապէս, զորս Լիւս—Սիւս չը լսեց իսկ, վասն զի իր աչքերն ափսոսալ յառած կը մնային նորեկներէն երրորդին վրայ:

Վասն զի այդ անձ անանկ մարդ մըն էր զոր մէկ անգամ իսկ տեսնելէ ետք անկարելի էր մոռնալ:

Բարձրահասակ մէկն էր զարհուրելի տգեղութեամբ և զգուելի երեւոյթով:

Ծաղկախտէ անդորմաբար աւերուած իր դէմքը լիւր ժպիտով մը կը ծոռնէր, արիւնոտ ու մազուրկ լինդեր երևան հանելով:

Իր աչքերը, ցաւոտ ու արիւնազեղ, դադանի աչքերու պէս կը բլթէին. ընդլայնուած ու շարժուն

նշուները կարծես արիւնայեղութեան հոտ կ'առնէին:

Երկաթաթիւլ գլխարկ մը դրած էր և կարմիր վըտաւակ մը հագած, որուն կաշիէ մօրթէն կը կախուէին հինգ փոկեր՝ սուր գամերով վերջացած:

Դրան սեմին վրայ անշարժ՝ իբր թէ մուտքը պաշտպանելու համար, աջ ձեռքովը կը կրթներ հնդկական երկար ու արիւնոտ գաւազանի մը վրայ:

Ի—Թէի Կարմուհիին կը թուէր թէ կը ճանչնար արդէն այդ հրէշը, թէ արդէն տեսած էր զայն, եւ անշուշտ անմիջապէս յիշեց, վասն զի աչքերը փակեց՝ սոսկման ճիշդ մը զսպելով:

Յիշած էր թէ իր մայրը զինքը վախցնելու համար՝ երբ տղայ էր և չէր ուզեր հնազանդիլ՝ շատ անգամ ցուցուցած էր իրեն այն պատկերներէն մէկուն վրայ որք գլխատման օրերը կը վաճառուին ի Զինաստան, մարդ մը որ կը նմանէր այդ իր առջեւ կեցող մարդուն, եւ թէ այդ մարդը դահիճն էր:

Աւա՛ղ, չէր սխալեր:

Տնօրէնին ընկերակցող մանտարէնը՝ Լէնկ—Թա—Լանկի սպանութեան գործը բնեւէ պաշտօն ունեցող դատաւորն էր, եւ կանոնները կը պահանջէին որ այս կարգի պաշտօնատարները միշտ իրենց հետ ունենան այն մարդը որ վերջին բռն էր օրէնքին, կարծես անոնց յիշեցնելու համար ամեն վայրկեան՝ իրենց վճիռներուն հետեւանքները եւ իրենց պարտականութիւններուն ծանրութիւնը:

Մանտարէնի մէկ նշանին վրայ, դահիճը մօտեցաւ բանտարկելուհիին:

(Շար.)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՈՒՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐԻ

Պատկերազարդ

ՖՐԱՆՍԱԶԱՅ

ՓԵՐՏԶ

1900

Սոյն ընդարձակ բառգիրքը, որուն առաջին հատորը, 1061 մեծագիր երեսներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած, հրապարակ ելած է, կը պարունակէ A—H գիրերը:

Պուլկարիոյ և Ռուսմանիոյ մէջ գնել փափաքողները պէտք է դիմեն Վառնա «Հայելի» խմբագրութեան:

Նոյնպէս կարելի է ուղղակի, դիմել հեղինակին, հետեւեալ հասցեով

108 Ալլընիա սթ Նեոյի

Նեոյի սիւռ Սէն

(Ֆրանս)

Ամէն մէկ հատորի գինն է 25 ֆրանք:

Печатница „Взаимность“ — Варна.